acba

2022թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 125-րդ հոդվածի և ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2008թ. մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի 49-րդ կետի պահանջները՝ ներկայացնում ենք 2022թ. ընթացքում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից բացահայտված էական փաստերն ու տեղեկությունները, և միաժամանակ հաստատում ենք, որ սույն հաշվետվության մեջ ներառված փաստերն ու տեղեկությունները հավաստի և լիարժեք են ու չեն պարունակում այնպիսի բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել տվյալ փաստաթղթի իմաստն ու ամբողջականությունը:

Տեղեկացնում ենք, որ նշված նյութերը հրապարակվել են նաև Բանկի ինտերնետային կայքում՝ հետևյալ հղումով.

https://www.acba.am/hy/announcements/invest-1637070599

Առդիր 7 էջ:

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		11.05.2023թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ / "ACBA BANK" OJSC
Կենտրոնական գրասենյակ
Head Office

+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am

ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA

Տեղեկացնում ենք, որ ս.թ. հունվարի 27-ին «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի նիստի թիվ 132-1 որոշման համաձայն դադարեցվել են Բանկի Խորհրդի նախագահ Մարատ Հարությունյանի լիազորությունները Խորհրդի կազմում:

Խորհրդի նույն նիստի 132-2 որոշմամբ Բանկի Խորհրդի նոր նախագահ է նշանակվել Ռաֆայել Երվանդի Սարգսյանը:

Տեղեկացնում ենք, որ ԱԿԲԱ ԲԱՆԿԻ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվելու է 2022 թվականի ապրիլի 28-ին: Ընդհանուր ժողովին մասնակցելու և տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք կունենան Բանկի բոլոր այն բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2022 թվականի ապրիլի 11-ի ժամը 17:00-ի դրությամբ ընդգրկված կլինեն Բանկի բաժնետերերի ռեեստրում: Շահութաբաժինների չափի և վճարման մասին վերջնական որոշումը կընդունվի ընդհանուր ժողովի կողմից:

Էական փաստեր և տեղեկություններ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ:

Տեղեկացնում ենք, որ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բանկ) խորհրդի 2022 թվականի փետրվարի 28-ի նիստի թիվ 133-3.6 որոշման՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով) գումարվել է 2022 թվականի ապրիլի 28-ին, ժամը 15:00-ին, «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» ("FOODPARK BY DOWNTOWN") կենտրոնում (հասցե՝ ՀՀ, 0002, ք.Երևան, Իսակովի 11), սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ (Covid-19 համավարակի դեմ պայքարի նկատառումներից ելնելով): Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն են ունեցել մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին տեսակապով (Մայքրոսոֆթ թիմս ծրագրով) և քվեարկել առցանց եղանակով կամ քվեաթերթիկի միջոցով:

Ընդհանուր ժողովի կողմից քննարկվել և կայացվել են հետևյալ որոշումները.

1. Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին հաստատելու մասին.

Բանկի 2022, 2023 և 2024 թվականների արտաքին աուդիտն իրականցնող կազմակերպության ընտրության համար անց կացված մրցույթի արդյունքում Բանկի խորհուրդը հաղթող չի ընտրել՝ առաջարկելով բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին անցկացնել արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության նոր մրցույթ և դրա արդյունքով հաղթող ճանաչված անձին ներկայացնել բաժնետերերի արտահերթ ժողովի հաստատմանը:

Արդյունքում, համաձայն խորհրդի առաջարկության, Ընդհանուր ժողովի կողմից որոշում է կայացվել անցկացնել անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նոր մրցույթ և դրա արդյունքով հաղթող ճանաչված անձին ներկայացնել բաժնետերերի արտահերթ ժողովի հաստատմանը:

2. Բանկի 2021թ. տարեկան շահույթը բաշխելու մասին.

Տվյալ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվելու Բանկի 2021 թվականի գործունեության արդյունքում ձևավորված շահույթի բաշխման հարցը: 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթը կազմել է 9,813,482,000 (ինը միլիարդ ութ հարյուր տասներեք միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ: Բաժնետերերին առաջարկվել է վճարել ընդհանուր 3,300,000,000 (երեք միլիարդ երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ շահութաբաժիններ, յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ, իսկ հաստատման դեպքում շահութաբաժինները վճարվելու են մինչև 01 հունիսի 2022 թվականը:
Միևույն ժամանակ, հաշվի առնելով 2021 թվականին Բանկի կողմից թողարկված լրացուցիչ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման արդյունքներով Բանկի կանոնադրական

կապիտալի ավելացման փաստը և պարտավորված լինելով ապահովել Բանկի պահուստային հիմնադրամի համար օրենքով պահանջվող նվազագույն չափը՝ Բանկի խորհուրդն առաջարկել է էմիսիոն եկամտից 750,000,000 (յոթ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամն ուղղել Բանկի պահուստային հիմնադրամի համալրմանը և այն սահմանել 8,250,000,000 (ութ միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ ապահովելով օրենսդրությամբ պահանջվող նվազագույն շեմը:

Արդյունքում Ընդհանուր ժողովը կայացրեց հետևյալ որոշումները.

- *Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ 12/04/2022թ.-ի Խորհրդի նիստի թիվ 135-3 որոշումը և հաշվի առնելով Բանկի 2021 թվականի ֆինանսական արդյունքները՝ Բանկի 2021թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել ընդհանուր 3,300,000,000 (երեք միլիարդ երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ:*

  Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 01/06/2022թ. ներառյալ, դրամական եղանակով, միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ: Շահութաբաժինների վճարումն իրականացնել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2022 թվականի ապրիլի 11-ի, ժամը 17:00-ի դրությամբ Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:

- *Բանկի կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ էմիսիոն եկամտից 750,000,000 (յոթ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ուղղել Բանկի պահուստային հիմնադրամին (Գլխավոր պահուստին)՝ այն դարձնելով 8,250,000,000 (ութ միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ:*

3. Բանկի խորհրդի կազմը վերանայելու մասին.

Տվյալ հարցի շրջանակներում բաժնետերերին առաջարկվել է Բանկի խորհրդի կազմը սահմանել 10 անձ և հետևյալ թեկնածուներին ընտրել խորհրդի կազմում.

- ***ԿԼԱՈՒՍ ԳՐԵՍԵՆԲԱՈՒԵՐ*** *– Դոկտոր Կլաուս Գրեսենբաուերը զբաղեցրել է առանցքային տարբեր պաշտոններ ավստրիական CREDITANSTALT բանկում, ինչպես նաև հանդիսացել է Եվրոպական արժույթի ինստիտուտի Վերահսկողության և կազմակերպման ստորաբաժանման ղեկավարը: Այնուհետև, Դոկտոր Կլաուսը երկար տարիներ աշխատել է Եվրոպական կենտրոնական բանկում ՝ զբաղեցնելով Պլանավորում և հսկողության տնօրինության տնօրենի և ներքին աուդիտի ղեկավարի պաշտոնները: Առաջարկվել է դոկտոր Կլաուս Գրեսենբաուերին նշանակել որպես Բանկի խորհրդի անկախ անդամ:*

- ***ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*** *- Աշոտ Կարապետյանը 1995-2002 և 2004-2007թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, իսկ 2008 թվականից բնակություն է հաստատել Կանադայում և աշխատանքի անցել Կանադայի հիփոթեքային և բնակարանային կորպորացիայում և այժմ զբաղեցնում է վերջինիս Արժեթղթավորման ռիսկերի կառավարման, ռազմավարության և պրոդուկտների ավագ մասնագետի պաշտոնը: Առաջարկվել է Աշոտ Կարապետյանին նշանակել որպես Բանկի խորհրդի անկախ անդամ:*
- ***ՎԱՐԴԱՆ ՈՒՌՈՒՏՅԱՆ*** *- Վարդան Ուռուտյանը երկար տարիներ աշխատել է Ագրարային համալսարանի, ԱՄՆ գյուղդեպարտամենտի և Տեխասի A&M համալսարանի կողմից հիմնադրված Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում (ԱՈՒԿ) սկզբում որպես դասախոս և հետազոտող, այնուհետև կենտրոնի փոխտնօրեն, հետագայում նաև՝ տնօրեն: 2018թ. դեկտեմբերից մինչ օրս Վարդան Ուռուտյանը հանդիսանում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորը: Առաջարկվել է Վարդան Ուռուտյանին նշանակել որպես Բանկի խորհրդի անդամ Յողիկ Ասոյանի փոխարինող, որի պաշտոնավարման ժամկետն ավարտվում է:*
- ***ԱՐԱՄ ԲԱԲԱՅԱՆ*** *– Արամ Բաբայանը 2005-2009թթ. աշխատել է Հայաստանի պետական ագրարային համալսարանում ՝ դասավանդելով հաշվապահական հաշվառում և աուդիտ: 2009 թվականից անցել է աշխատանքի Գերմանական միջազգային համագործակցությունում (GIZ) և ներգրավված է եղել Հայաստանում գյուղատնտեսության զարգացմանն ուղղված մի շարք առանցքային ծրագրերում: Ներկայումս Արամ Բաբայանը հանդիսանում է Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) «Հարավային Կովկասում մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում» ծրագրի թիմի ղեկավարը: Առաջարկվել է Արամ Բաբայանին նշանակել որպես Բանկի խորհրդի անդամ Արայիկ Աբասյանի փոխարինող, որի պաշտոնավարման ժամկետն ավարտվում է:*
- ***ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԱԽՉԱՆՅԱՆ*** *– Հարություն Փախչանյանը 2011-2012թթ. աշխատել է Պիցցա Էքսպրեսս ընկերությունում (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) որպես մենեջերի օգնական, 2012-2014թթ.՝ Գոնդոլա Գրուպում (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) որպես ֆինանսական վերահսկող: 2015 թվականից մինչ օրս Հարություն Փախչանյանը հանդիսանում է «ԱՐՄԲԵՐՐԻ» ընկերության գործադիր տնօրենը: Առաջարկվել է Հարություն Փախչանյանին նշանակել որպես Բանկի խորհրդի նոր անդամ:*

Միևնույն ժամանակ տվյալ հարցի շրջանակներում առաջարկվող որոշումներով առաջարկվել է Բանկի խորհրդի կազմում վերանշանակել խորհրդի հետևյալ անդամներին.

- ***ՀԵՆՐԻԿ ՔՈՉԻՆՅԱՆ*** *– Հենրիկ Քոչինյանը զբաղեցրել է բազմաթիվ առանցքային պաշտոններ ՀՀ պետական կառավարման համակարգում, խոշոր կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատությունում:*

Մասնավորապես, 1990-1998 թվականներին եղել է Հայաստանի տրանսպորտի և կապի նախարար: 1998-2006 թվականներին եղել է Լոռու մարզպետ, 2008-2010 թվականներին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի հարկային տեսչության պետ, վարչության պետի տեղակալ, 2010-2013թթ.՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն: Հենրիկ Քոչինյանը 2010 թվականի մայիսից հանդիսանում է ԱԿԲԱ բանկի խորհրդի անդամ: Քանի որ այս տարի լրանում էր Հենրիկ Քոչինյանի պաշտոնավարման ժամկետը, առաջարկվել է վերջինիս վերանշանակել Բանկի խորհրդի անդամի պաշտոնում:

- ***ԲՐՈՒՆՈ ՇԱՐԻԵ*** *– Բրունո Շարիեն 1974 թվականից աշխատել է Կրեդիտ Ագրիկոլ խմբի տարբեր ընկերություններում: 2000-2002թթ. զբաղեցրել է Կրեդիտ Ագրիկոլ CEDICAM (Քարտեր և վճարումներ) ընկերության տնօրենի պաշտոնը, 2003-2006թթ. Կրեդիտ Ագրիկոլ Կենտրոն-արևելքի Գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը, 2007-2013թթ. զբաղեցրել է Հունական Էմպորիկի Բանկի Գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը և 2013-2016 թթ.՝ Կրեդիտ Ագրիկոլ Սերբիայի Գործադիր խորհրդի նախագահի և Կրեդիտ Ագրիկոլ Լիզինգ Սերբիայի Գործադիր խորհրդի նախագահի պաշտոնները: Բրունո Շարիեն 2019 թվականի հունիսից հանդիսանում է ԱԿԲԱ բանկի խորհրդի անկախ անդամ: Քանի որ այս տարի լրանում էր Բրունո Շարիեի պաշտոնավարման ժամկետը, առաջարկվել է վերջինիս վերանշանակել Բանկի խորհրդի անկախ անդամի պաշտոնում:*

Առաջարկվող որոշումների ընդունման արդյունքում Բանկի խորհուրդը բաղկացած կլինի 10 անդամից, որոնցից 3-ը՝ անկախ անդամներ:

Տվյալ հարցի շրջանակներում Ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները.

1. *Հենրիկ Քոչինյանին և Բրունո Շարիեին վերանշանակել Բանկի խորհրդի կազմում:*
2. *Որպես Բանկի խորհրդի նոր անկախ անդամ ընտրել Կլաուս Գրեսենբաուերին:*
3. *Որպես Բանկի խորհրդի նոր անկախ անդամ ընտրել Աշոտ Կարապետյանին:*
4. *Որպես Բանկի խորհրդի նոր անդամ ընտրել Հարություն Փախչանյանին:*
5. *Որպես Բանկի խորհրդի նոր անդամ ընտրել Վարդան Ուռուտյանին և դադարեցնել Խորհրդի անդամ Յողիկ Ասոյանի լիազորությունները:*
6. *Որպես Բանկի խորհրդի նոր անդամ ընտրել Արամ Բաբայանին և դադարեցնել Խորհրդի անդամ Արայիկ Աբասյանի լիազորությունները:*
7. *Հաստատել Բանկի խորհրդի հետևյալ կազմը բաղկացած հետևյալ 10 անդամներից, որոնցից 3-ը՝ անկախ անդամներ.*

1) Ռաֆայել Սարգսյան – Խորհրդի նախագահ
2) Բրունո Շարիե – Խորհրդի անկախ անդամ
3) Կլաուս Գրեսենբաուեր – Խորհրդի անկախ անդամ
4) Աշոտ Կարապետյան – Խորհրդի անկախ անդամ
5) Հենրիկ Քոչինյան – Խորհրդի անդամ
6) Հարություն Փախչանյան – Խորհրդի անդամ
7) Վարդան Ուռուտյան – Խորհրդի անդամ
8) Արամ Բաբայան – Խորհրդի անդամ
9) Արմեն Մկրտչյան – Խորհրդի անդամ
10) Հրաչ Սարգսյան – Խորհրդի անդամ

8. *Խորհրդի նոր անդամներ Կլաուս Գրեսենբաուերին, Աշոտ Կարապետյանին, Վարդան Ուռուտյանին, Արամ Բաբայանին և Հարություն Փախչանյանին ներկայացնել գրանցման, իսկ լիազորությունները դադարեցված խորհրդի անդամներ Ցողիկ Ասոյանին և Արայիկ Աբասյանին ներկայացնել գրանցումից հանելու ՀՀ կենտրոնական բանկ:*

Քվեարկության արդյունքներն ամփոփվել են 2022 թվականի մայիսի 3-ին՝ Հաշվիչ հանձնաժողովի թիվ 1 արձանագրությամբ:

Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվել է 2022 թվականի մայիսի 4-ին՝ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո: